ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

DOI: 10.52174/2579-2989_2023.1-71

Հիմնաբառեր. *տնտեսական վերափոխումներ, համաթիվ, տնտեսության մրցունակություն, որակական փոփոխություններ, բարեփոխումների գնահատում*

Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2011 թ. ավարտել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը և 2013 թ. ընդունվել ՀՊՏՀ ասպիրանտուրա: 2017 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2015-2016 թթ. դասավանդել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում: 2016 թ.-ին աշխատանքի է անցել «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2017 թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնում:

ORCID - https://orcid.org/0000-0002-6883-455X

Տնտեսական վերափոխումների նպատակային քաղաքականության իրականացումը ոչ միայն ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու միջոց է, այլև երկարաժամկետ հեռանկարում տնտեսության զարգացման կարևոր նախապայման: Հոդվածում կատարվել է Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի տնտեսական վերափոխումների և դրանց առանցքային բաղադրիչների շարժընթացի համեմատական վերլուծություն: Տնտեսական վերափոխումների որոշակի ոլորտներում Հայաստանի առաջանցիկ դիրքն Ադրբեջանի և Վրաստանի նկատմամբ հիմնականում պայմանավորված է կարգավորումային և նորմատիվային բարեփոխումներով: Հայաստանին չի հաջողվել խորացնել վերափոխումների մեկնարկային առավելությունները հարևան երկրների նկատմամբ: Ընդհանուր առմամբ, Հայաստանի տնտեսական վերափոխումների առանցքային ուղղություններում տարիներ շարունակ չեն արձանագրվել որակական նշանակալի դրական տեղաշարժեր: Հետագայում հաջողության հասնելու համար օրակարգային է համարվում համապատասխան տնտեսական ուղենիշների հստակեցումը՝ առանցքում պահելով բարեփոխումների որակական կողմը:

Համավարակով պայմանավորված ցնցումներն ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող տնտեսությամբ երկրներին ստիպեցին շեղվել իրենց բնականոն զարգացման հունից և հաշվի նստել «արտառոց» իրողությունների հետ: Անշուշտ, ինչպես

ռուս-ուկրաինական հակամարտության, այնպես էլ համավարակի բացասական հետևանքները խորքային ազդեցություն ունեցան մարդկային կենսակերպի և տնտեսական գործունեության վրա[1]: Հասկանալի է, որ մեծ ջանքեր կպահանջվեն այդ հետևանքները մեղմելու և տնտեսության վերակառուցման բնականոն ընթացքը վերականգնելու համար:

Ստեղծված տնտեսական բարդ իրողությունները մտահոգիչ են հատկապես զարգացող տնտեսությամբ երկրների համար: Ընդ որում, ըստ ՎԶԵԲ-ի, տնտեսական կտրուկ անկում արձանագրել են հիմնականում այն երկրները, որոնք ավելի քիչ են ջանացել տնտեսության վերափոխման ուղղությամբ[2]: Այս առումով, կարևոր նշանակություն է ստանում զարգացող տնտեսությամբ երկրներում իրականացվող վերափոխումների քաղաքականության գերակայությունների ու ուղենիշների վերանայումը՝ առանցքում պահելով համապատասխան արդյունքների քանակական գնահատումը: Այն հնարավորություն կտա բացահայտելու այն «խոցելի կետերը», որոնք մինչ այդ, գուցե, տեսանելի չէին, և որոնք էլ մեծապես պայմանավորել են ձախողումները:

Ստորև կատարել ենք երկրների տնտեսական վերափոխումների և դրանց որոշակի բաղադրիչների շարժընթացի վերլուծություն՝ ըստ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, ինչպես նաև Բերթելսման հիմնադրամի կողմից զարգացող տնտեսությամբ երկրների համար հաշվարկվող վերափոխումների ցուցանիշների: Համեմատական վերլուծությունը կատարել ենք Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի (առանձին ցուցանիշների մասով՝ նաև ԵԱՏՄ երկրների) նույնանման ցուցանիշների միջև, իսկ առաջատար երկրներից դիտարկել ենք Էստոնիան՝ որպես ուղենիշ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը գնահատում է տնտեսության վերակառուցման առաջընթացը՝ երկրները որակելով որպես մրցունակ, արդյունավետ կառավարվող, կանաչ, ներառական, դիմացկուն և ինտեգրված[3]:

Ըստ ՎԶԵԲ-ի գնահատականների՝ 2022 թվականին Հայաստանը գերազանցել է հարևան Վրաստանին և Ադրբեջանին տնտեսության մրցունակության, կառավարման, կանաչ տնտեսության և դիմացկունության ցուցիչներով: Այդ ամենով հանդերձ, Էստոնիայի վերափոխումների արդյունքային գնահատականների մակարդակն անհասանելի է ինչպես ՀՀ-ի, այնպես էլ Ադրբեջանի և Վրաստանի համար (գծապատկեր 1): Սա առավել ակնհայտ է դառնում որոշ ցուցիչների 2016-2022 թվականների շարժընթացը դիտարկելիս:

Ըստ գործարարության ոլորտի նորմատիվային բարեփոխումները, ինչպես նաև նորարարական հնարավորությունները բնութագրող տնտեսության մրցունակության ցուցիչի՝ Հայաստանը և հարևան երկրները 2016 թվականի նկատմամբ համեստ աճ են արձանագրել: Աճի տրամաբանությունը պահպանվել է հատկապես 2018-2022 թթ. ժամանակահատվածում: Այս առումով, բացառություն է Վրաստանը, որի գնահատականը 2019 թվականից ի վեր նվազել է (գծապատկեր 2): Ընդհանուր առմամբ, Հայաստանը տնտեսության մրցունակության գնահատականով առաջ է անցել Ադրբեջանից և Վրաստանից, որը վկայում է գործարարության համար նպաստավոր պայմանների (կարգավորումների), ինչպես նաև գիտելիքահենք տնտեսության ձևավորման ներուժի առկայության մասին:

Նմանօրինակ պատկեր է նաև դիմացկունության ցուցիչի դեպքում, որը վերաբերում է տնտեսության վերակառուցման տեսանկյունից առանցքային երկու ոլորտներում (էներգետիկ անվտանգություն և

[1] Ավելի մանրամասն տես European Bank for Reconstruction and Development, Transition Report 2022-23, Business Unusual, էջ 4, https://www.ebrd.com/publications/transition-report-202223-other

[2] Ավելի մանրամասն տես European Bank for Reconstruction and Development, Transition Report 2022-23, Business Unusual, էջ 102, https://www.ebrd.com/publications/transition-report-202223-other

[3] Ավելի մանրամասն տես European Bank for Reconstruction and Development, Transition Report 2022-23, Business Unusual, Structural Reform: Methodological Notes, էջ 3-8, https://www.ebrd.com/publications/transition-report-202223-methodological-notes



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Տնտեսության կառուցվածքային վերափոխումների գնահատականներն ըստ ՎԶԵԲ-ի, 2022 թ.[4]



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Տնտեսական մրցունակության ցուցիչը, 2016-2022 թթ.[5]



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Դիմացկունության ցուցիչը, 2016-2022 թթ.[6]

[4] Աղբյուրը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի տարեկան հաշվետվություն (European Bank for Reconstruction and Development, Transition Report 2022-23, Business Unusual), էջ 103:

[5] Աղբյուրը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի 2017-2022 թթ. տարեկան հաշվետվությունները, տես European Bank for Reconstruction and Development, Transition Report 2017-2018, Sustaining growth, page 109, Transition Report 2018-2019, Work in Transition, page 109, Transition Report 2019-2020, Better governance, better economies, page 111, Transition Report 2020-21, The state strikes back, page 115, Transition Report 2021-22 System Upgrade, delivering the digital dividend, page 125, Transition Report 2022-23, Business Unusual, էջ 103:

[6] Աղբյուրը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի 2016-2022 թթ. տարեկան հաշվետվությունները, տես օրինակ Transition Report 2017-2018, Sustaining growth, էջ 109:

ֆինանսական կայունություն) իրականացվող բարեփոխումներին[7]: Հարկ է նշել, որ այս գնահատականով Հայաստանը բարենպաստ դիրք է զբաղեցնում հարևան Ադրբեջանի և Վրաստանի համեմատ, սակայն, էներգետիկ և ֆինանսական առումով, առավել «դիմացկուն» Էստոնիայի նկատմամբ խզումը շարունակաբար մեծանում է՝ ի վնաս Հայաստանի (գծապատկեր 3):

Ի տարբերություն տնտեսության մրցունակության գնահատականի, 2020 թվականն առավել բեկումնային է եղել էներգետիկ և ֆինանսական ոլորտների դիմացկունության ցուցիչի տեսանկյունից, ինչը նշանակում է, որ այս ոլորտներն ավելի շատ են տուժել համավարակի և պատերազմի հասցրած վնասներից: Հետևապես՝ դիմացկունության ցուցչի բարելավումը կարող է յուրօրինակ ազդակ դառնալ տնտեսության վերականգնման կամ առողջացման մակարդակը գնահատելիս:

Տնտեսության վերակառուցման ընթացքն ավելի համակողմանիորեն գնահատելու համար դիտարկել ենք նաև Բերթելսման հիմնադրամի մշակած տնտեսական վերափոխումների համաթիվը[8]: Հայաստանը տնտեսական վերափոխումների համաթվով գերազանցում է հարևան Վրաստանին և Ադրբեջանին (գծապատկեր 4), ինչպես նաև ԵԱՏՄ երկրներին, բացառությամբ՝ Ռուսաստանի, որի հետ գրեթե նույն մակարդակում է:

Այդուհանդերձ, առաջին հայացքից բացառիկ թվացող այս հաջողությունն ամենևին էլ պայմանավորված չէ որոշակի ոլորտներում վերափոխումների արդյունքային գնահատականների որակական փոփոխություններով: Այս խնդիրն առավել տեսանելի է դառնում տնտեսական վերափոխումների համաթվի և դրա որոշ բաղադրիչների շարժընթացը դիտարկելիս: Գծապատկեր 5-ից երևում է, որ 2022 թ. Հայաստանի տնտեսական վերափոխումների համաթիվը նվազել է՝ նախկինում արձանագրվածի համեմատ:

Տնտեսության վերակառուցման և կայուն զարգացման տեսանկյունից, առանցքային է Հայաստանի տնտեսության վիճակը բնութագրող տնտեսության նկարագիր ցուցիչի շարժընթացի դիտարկումը:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Բերթելսման հիմնադրամի տնտեսական վերափոխումների համաթիվը, 2022 թ.[9]

[7] Ավելի մանրամասն տես European Bank for Reconstruction and Development, Transition Report 2022-23, Business Unusual, Structural Reform: Methodological Notes, էջ 6-7:

[8] Բերթելսման հիմնադրամի տնտեսական վերափոխումների համաթիվն ընդգրկում է հետևյալ ցուցիչները՝ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ, շուկա և մրցակցություն, դրամավարկային և հարկաբյուջետային կայունություն, սեփականության իրավունքի պաշտպանություն, բարեկեցության մակարդակ, տնտեսության նկարագիր, կայունություն:

[9] Աղբյուրը՝ Բերթելսման հիմնադրամի Վերափոխումների համաթվի ամփոփ տվյալների բազան, https://bti-project.org/fileadmin/api/content/en/downloads/data/BTI_2006-2022_Scores.xlsx



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Տնտեսական վերափոխումների համաթիվը, 2006 թ., 2014 թ. և 2022 թ.[10]



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Տնտեսության նկարագրի ցուցիչը, 2006 թ., 2014 թ. և 2022 թ.[11]

Այն հիմնվում է մակրոտնտեսական այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, տնտեսական աճը, գնաճը, գործազրկության մակարդակը, օտարերկրյա ուղղակի ներդրումները, պետական պարտքը և այլն[12]: Հայաստանի տնտեսության զարգացումը նկարագրող այդ ամփոփ գնահատականում խտացված են Հայաստանի տնտեսության «գորշ գոյները »: Դիտարկելով մանրամասները՝ կարող ենք նկատել, որ 2006-2010 թթ., առաջին հայացքից, Հայաստանին հաջողվել է տնտեսությունը նկարագրող ցուցանիշները նկատելիորեն բարելավել, որի արդյունքում նույնիսկ առաջատար Էստոնիայի նկատմամբ մեր երկիրն ապահովել է մրցակցելի մակարդակ: Սակայն, հետագա տարիներին չենք կարողացել պահպանել մակրոտնտեսական ցուցանիշների դրական միտումը: Ավելին, տնտեսության վիճակը բնութագրող քանակական գնահատականների առումով, առաջատար երկրի նկատմամբ առկա բացասական տարբերությունը գնալով խորացել է՝ ի վնաս մեզ: Ընդհանուր առմամբ, Հայաստանին ոչ միայն չի հաջողվել պահպանել 2006-2010 թթ. Ադրբեջանի նկատմամբ ձեռք բերված մրցակցային առավելությունը, այլև հետպատերազմական ժամանակահատվածում նկատելիորեն հետ է մնացել նրանից (գծապատկեր 6):

Նմանօրինակ պատկեր է նաև բնակչության աղքատության մակարդակը և սոցիալական անհավասարությունը բնութագրող սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ ցուցիչի դեպքում[13]: Այն

[10] Աղբյուրը՝ Բերթելսման հիմնադրամի Վերափոխումների համաթվի ամփոփ տվյալների բազան, https://bti-project.org/fileadmin/api/content/en/downloads/data/BTI_2006-2022_Scores.xlsx

[11] Ավելի մանրամասն տես Bertelsmann Transformation Index 2022, Codebook for Country Assessments, էջ 33, https://bti-project.org/fileadmin/api/content/en/downloads/codebooks/BTI2022_Codebook.pdf

[12] Ավելի մանրամասն տես Bertelsmann Transformation Index 2022, Codebook for Country Assessments, էջ 34, https://bti-project.org/fileadmin/api/content/en/downloads/codebooks/BTI2022_Codebook.pdf

[13] Ավելի մանրամասն տես Bertelsmann Transformation Index 2022, Codebook for Country Assessments, էջ 33, https://bti-project.org/fileadmin/api/content/en/downloads/codebooks/BTI2022_Codebook.pdf



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

Սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ցուցիչը, 2006 թ., 2014 թ. և 2022 թ.[14]



ԳԾԱՊԱՏԿԵՐ 8

Բարեկեցության ցուցիչը 2006 թ., 2014 թ. և 2022 թ.[15]

արտացոլում է Հայաստանի տնտեսական իրողությունների «դառը» պատկերը. տարիներ շարունակ երկրում արմատացած աղքատությունը և սոցիալական բևեռացվածությունը խոչընդոտել են տնտեսության վերակառուցումը: Տրամաբանական է, որ այս ցուցանիշով Հայաստանը հետ է մնում ԵԱՏՄ երեք երկրներից՝ Ղազախստան, Ռուսաստան և Բելառուս (գծապատկեր 7):

Սոցիալական բարեփոխումները բնութագրող մեկ այլ գնահատական է բարեկեցության ցուցիչը: Եթե նախորդ գնահատականը բացահայտում էր, թե ինչքանով են աղքատությունը և սոցիալական անհավասարությունը արգելակում տնտեսության վերակառուցումը, ապա բարեկեցության ցուցիչը վերաբերում է գործնականում սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված պետական քաղաքականությանը: Հետևապես՝ չափազանց բացասական երևույթ է այն, որ Հայաստանի համար առաջնահերթ համարվող այս ոլորտում նկատելի դրական տեղաշարժեր չեն արձանագրվել (գծապատկեր 8): Ակնհայտ է, որ սոցիալական ոլորտն առավելապես խոցելի է ներկայիս տնտեսական բարդ իրողությունների պայմաններում, և տրամաբանական կլիներ այս ուղղությամբ պետական ակտիվ քաղաքականության իրականացումը, որը գործնականում պետք է միտված լիներ սոցիալական բարեփոխումների խորացմանը:

Այսպիսով՝ հայացք նետելով տնտեսական վերափոխումների հետագծին, կարող ենք նկատել, որ չնայած այս ոլորտում արձանագրված մեկնարկային բարձր ար-

[14] Աղբյուրը՝ Բերթելսման հիմնադրամի Վերափոխումների համաթվի ամփոփ տվյալների բազան, https://bti-project.org/fileadmin/api/content/en/downloads/data/BTI_2006-2022_Scores.xlsx

[15] Նույն տեղում:

դյունքներին, այնուամենայնիվ, մեզ չի հաջողվել խորացնել վերափոխումների առավելությունները հարևան և ԵԱՏՄ երկրների նկատմամբ ու պահպանել գերազանցությունն ի սկզբանե բարձր արդյունք արձանագրած առանցքային ուղղություններում: Վերջին տասնամյակում Հայաստանը ձախողել է ուղենշային համարվող Էստոնիայի նկատմամբ ունեցած խզումը կրճատելու ուղղությամբ բոլոր փորձերը: Տարիներ շարունակ ձեռնամուխ լինելով նորմատիվային և կարգավորումային բարեփոխումների և դրանց արդյունքում որոշակի ցուցանիշների քանակական աճի ապահովմանը՝ Հայաստանի ուշադրության կենտրոնից դուրս է մնացել առանցքային և հեռանկարային ոլորտներում որակական բարեփոխումների իրականացմամբ մրցունակ տնտեսության կառուցումը: Մինչդեռ երկարաժամկետ հեռանկարում մրցունակ տնտեսության կառուցման ջանքերը գործնականում պետք է զուգորդվեն տնտեսական վերափոխումների հետագծի վերաիմաստավորման, տնտեսական բարդ իրողությունների նորովի ընկալման ու գնահատման, պետական քաղաքականության ուղենիշների ու կառուցակարգերի վերանայման ու հստակեցման հետ՝ դիտակետում պահելով հասարակական կյանքի և տնտեսության բարելավման որակական բնութագրիչները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բերթելսման հիմնադրամի Վերափոխումների համաթվի ամփոփ տվյալների բազան, https://bti-project.org/fileadmin/api/content/en/downloads/data/BTI_2006-2022_Scores.xlsx
2. Bertelsmann Transformation Index 2022, Codebook for Country Assessments, https://bti-project.org/fileadmin/api/content/en/downloads/codebooks/BTI2022_Codebook.pdf
3. European Bank for Reconstruction and Development, Transition Report 2017-2018, Sustaining growth, https://www.ebrd.com/transition-report-2017-18
4. European Bank for Reconstruction and Development, Transition Report 2018-2019, Work in Transition, https://www.ebrd.com/documents/oce/transition-report-201819-work-in-transition.pdf
5. European Bank for Reconstruction and Development, Transition Report 2019-2020, Better governance, better economies, https://www.ebrd.com/transition-report-2019-20
6. European Bank for Reconstruction and Development, Transition Report 2020-21, The state strikes back, https://www.ebrd.com/news/publications/transition-report/transition-report-202021.html
7. European Bank for Reconstruction and Development, Transition Report 2021-22 System Upgrade, delivering the digital dividend, https://euneighbourseast.eu/news/publications/ebrd-transition-report-2021-22-system-upgrade-delivering-the-digital-dividend/
8. European Bank for Reconstruction and Development, Transition Report 2022-23, Business Unusual, https://www.ebrd.com/publications/transition-report-202223-other
9. European Bank for Reconstruction and Development, Transition Report 2022-23, Business Unusual, Structural Reform: Methodological Notes, https://www.ebrd.com/publications/transition-report-202223-methodological-notes

Ани ХАЧАТРЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

АРМЕНИЯ И МИР

НА ПУТИ К РЕКОНСТРУКЦИИ ЭКОНОМИКИ

Реализация целенаправленной политики экономических реформ является не только способом противостояния современным вызовам, но и важной предпосылкой для развития экономики в долгосрочной перспективе. В статье проведен сравнительный анализ динамики экономических реформ (и их ключевых компонентов) в Армении, Азербайджане и Грузии. Передовая позиция Армении в отдельных сферах экономических реформ по сравнению с Азербайджаном и Грузией в основном обусловлена регулятивно-нормативными реформами. Армении не удалось углубить первоначальные преимущества преобразований над соседними странами. В целом, в основных направлениях экономических преобразований Армении не были отмечены существенные положительные качественные изменения в течение последних лет. Для достижения успеха в сфере экономических преобразований в дальнейшем на повестке дня стоит уточнение ориентиров для этих преобразований, в основе которых остаются качественные изменения в отдельных сферах реформ.

Ключевые слова: *экономические реформы, индекс, экономическая конкурентоспособность, качественные изменения, оценка реформ*

Ani KHACHATRYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE, PhD in Economics

ARMENIA AND WORLD

ON THE ROAD TO THE ECONOMIC RECONSTRUCTION

The implementation of economic reforms is not only a way to overcome current challenges, but it is also an important prerequisite for the development of the economy in a long-run perspective. The paper provides a comparative analysis of the dynamics of economic reforms and their main components in Armenia, Azerbaijan and Georgia. In different spheres of economic reforms the surpassing position of Armenia compared to Azerbaijan and Georgia is mostly due to regulatory and normative reforms.. Armenia has not succeeded in deepening the initial advantages of transformations over neighboring countries. In general, essential qualitative changes have not been achieved for many years. In the future, in order to succeed in economic reforms, it is on the agenda to clarify the guidelines of economic transformations mostly concentrating on qualitative changes.

Key words: *economic reforms, index, economic competitiveness, qualitative changes, assessment of reforms*